

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 86
< 15 12 > 2011թ.

ք. Արտաշատ

ՄԱՐԶՈՒՄ ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎԱԾ ԵՎ ՆՈՐՈԳՎԱԾ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածը, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածը, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածը և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության և Համաշխարհային բանկի զարգացման միջազգային ընկերակցության միջև ստորագրված «Առողջապահության ֆինանսավորում և առողջության առաջնային պահպանման զարգացում», «Առողջապահական համակարգի արդիականացում», «Առողջապահական համակարգի արդիականացման 2-րդ ծրագիր», վարկային, ֆինանսական և դրամաշնորհային համաձայնագրերի շրջանակներում իրականացված ծրագրերի համաձայն կառուցված, վերակառուցված և նորոգված շենքերի ու տարածքների շահագործումն ապահովելու նպատակով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 21 հուլիսի 2011 թվականի <<Հայաստանի Հանրապետության և համաշխարհային բանկի զարգացման միջազգային ընկերակցության միջև 1997 թվականի սեպտեմբերին ստորագրված <<Առողջապահության ֆինանսավորման բարելավում և առողջության առաջնային պահպանման զարգացում>> թիվ 2979-ԱՄ, 2004 թվականի հունիսի 29-ին

ստորագրված <<Առողջապահական համակարգի արդիականացում>> թիվ 3920-ԱՄ, 2007 թվականի մարտի 9-ին ստորագրված «Առողջապահական համակարգի արդիականացման 2-րդ ծրագիր» թիվ 4267-ԱՄ, 2006 թվականի հունիսի 7-ին ստորագրված <<Թոշնագրիպին նախապատրաստվածության ծրագիր>> թիվ 4178-ԱՄ վարկային համաձայնագրերի, ինչպես նաև 2007 թվականի հունիսի 8-ին ստորագրված <<Թոշնագրիպին հակազդելու ծրագիր>> թիվ MDTF 058076 դրամաշնորհային համաձայնագրի շրջանակներում իրականացված ծրագրերի համաձայն կառուցված, վերակառուցված և նորոգված շենքերի ու տարածքների հանձնում-ընդունումն ապահովող միջոցառումների մասին>> թիվ 1023-Ն որոշման.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրության սահմանված կարգով <<Առողջապահության ֆինանսավորման բարելավում և առողջության առաջնային պահպանման զարգացում>> թիվ 2979-ԱՄ, <<Առողջապահական համակարգի արդիականացում>> թիվ 3920-ԱՄ և <<Առողջապահական համակարգի արդիականացման 2-րդ ծրագիր>> թիվ 4267-ԱՄ վարկային ծրագրերի շրջանակներում՝

1) մարզում նոր կառուցված բժշկական ամբուլատորիաների շենքերը՝ յուրաքանչյուրի սկզբնական արժեքով, սեփականության իրավունքով հանձնել 100 տոկոս պետական՝ մարզային ենթակայության բժշկական հաստատություններին՝ համաձայն N1 հավելվածի, համապատասխան չափով լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու և բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու միջոցով ավելացնելով կազմակերպություններում կանոնադրական կապիտալները.


2) համայնքային ենթակայության բժշկական հաստատությունների համար կառուցված շենքերը՝ յուրաքանչյուրի սկզբնական արժեքով, նվիրաբերել համայնքներին՝ համաձայն N 2 հավելվածի, կառուցված շենքերում բացառապես առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցելու նպատակով.

3) մարզային և համայնքային ենթակայության բժշկական հաստատությունների նորոգված շենքերից յուրաքանչյուրի վերանորոգման արժեքները ավելացնել համայնքների հաշվապահական հաշվեկշիռներում արտացոլված շենքերի հաշվեկշռային արժեքներին՝ համաձայն N3 հավելվածի.


4) մարզի չորս բժշկական կենտրոնների և Վեդու ծննդատան մասնակի վերանորոգումների, ձեռք բերված գույքի և սարքավորումների, ավտոմեքենաների նախնական արժեքները ավելացնել կազմակերպությունների հաշվեկշռային արժեքին՝ համաձայն N4 հավելվածի, համապատասխան չափով լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու և բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու միջոցով ավելացնելով կազմակերպություններում կանոնադրական կապիտալները:

2. Համայնքների ղեկավարներին՝ սույն որոշման N1, N2, N3 հավելվածներում նշված առողջապահական հիմնարկների գույքային իրավունքների պետական գրանցումը իրականացնել համապատասխան համայնքի միջոցների հաշվին:

ՄԱՐԶՊԵՏ՝



Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ



Ց Ա Ն Կ

100 ՏՈԿՈՍ ՊԵՏԱԿԱՆ՝ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆՎԱԾ ՇԵՆՔԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արգավանդի գյուղական համայնքի առողջության առաջնային պահպանման կենտրոնի նորակառույց շենքը՝ 32,628,924.00 դրամ սկզբնական արժեքով՝ «Արգավանդի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը

2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դարակերտի գյուղական համայնքի առողջության առաջնային պահպանման կենտրոնի նորակառույց շենքը՝ 33,005,247.00 դրամ սկզբնական արժեքով՝ «Դարակերտի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը

3. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Կանաչուտի գյուղական համայնքի առողջության առաջնային պահպանման կենտրոնի նորակառույց շենքը՝ 48,601,744.20 դրամ սկզբնական արժեքով՝ «Կանաչուտի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը

4. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոյակերտի գյուղական համայնքի առողջության առաջնային պահպանման կենտրոնի նորակառույց շենքը՝ 39,955,407.60 դրամ սկզբնական արժեքով՝ «Նոյակերտի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը

5. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ուրցաձորի գյուղական համայնքի առողջության առաջնային պահպանման կենտրոնի նորակառույց շենքը՝ 41,019,880.00 դրամ սկզբնական արժեքով՝ «Ուրցաձորի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝


Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված N 2

ՀՀ Արարատի մարզպետի

2011 թվականի դեկտեմբերի 15-ի

N 86 որոշման




Ց Ա Ն Կ

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՆԿԻՐԱԲԵՐՎՈՂ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ՇԵՆՔԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի «Ավշարի բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերության համար կառուցված շենքը՝ Ավշարի գյուղական համայնքին՝ 32,387,622.00 դրամ արժեքով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ



Ց Ա Ն Կ

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇԻՎՆԵՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԵՎ ՆՈՐՈԳՎԱԾ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապի գյուղական համայնքի հաշվապահական հաշվեկշռում հաշվառված «Այնթապի բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերության շենքի հաշվեկշռային արժեքն ավելացնել 17,277,509.00 դրամով:

2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեգարդի գյուղական համայնքի հաշվապահական հաշվեկշռում հաշվառված «Այգեգարդի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության շենքի հաշվեկշռային արժեքն ավելացնել 19,182,661.30 դրամով:

3. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ջրաշենի գյուղական համայնքի հաշվապահական հաշվեկշռում հաշվառված «Ջրաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության շենքի հաշվեկշռային արժեքն ավելացնել 22,019,894.40 դրամով:

4. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստանի գյուղական համայնքի հաշվապահական հաշվեկշռում հաշվառված «Բուրաստանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության շենքի հաշվեկշռային արժեքն ավելացնել 14,324,535.60 դրամով:


5. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սուրենավանի գյուղական համայնքի հաշվապահական հաշվեկշռում հաշվառված «Սուրենավանի բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերության շենքի հաշվեկշռային արժեքն ավելացնել 13,846,997.30 դրամով:

6. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սիսի գյուղական համայնքի հաշվապահական հաշվեկշռում հաշվառված «Սիսի բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերության շենքի հաշվեկշռային արժեքն ավելացնել 23,652,673.37 դրամով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ



Ց Ա Ն Կ

ՎԵՐԱՆՈՐՈԳՎԱԾ ԳՈՒՅՔ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐ ՁԵՌՔ
ԲԵՐՎԱԾ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ

1. «Արտաշատի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն-377 մլն. դրամ:
2. «Մասիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն -116 մլն. դրամ:
3. «Վեդու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն - 52 մլն. դրամ:
4. «Վեդու ծննդատուն» փակ բաժնետիրական ընկերություն -107 մլն. դրամ:
5. «Արարատի հիվանդանոց բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն-
- 508 մլն. դրամ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ